# ՀԱՅ ԲԺՇԿԱԳԻՏՈՒԹՅԱՆ ԵՐԱԽՏԱՎՈՐԸ. ՔՐԻՍՏԱՓՈՐ ՀԱՅՐԱՊԵՏԻ ՊԵՏՐՈՍՅԱՆ *

**Լենա Սուլեյմանյան**

**Բանալի բառեր՝** բժշկագիտություն, օրթոպեդիա, վնասվածքաբանություն, վիրահատական վիրաբուժություն, էվակոհոսպիտալ, վաստակավոր գործիչ:

*Աշխարհիս վերայ մարդոյն կոչումն, պատիվ, փառք,*
*արժանապատվութիւն՝ իւր գործքերու կշիռն է. նա ինչ վիճակի մեջ կը լինի,*
*թող լինի. նորա նուիրական պարտքն է ճանչնալ իւր կոչումն...*
*թե ինքն այս աշխարհիս վերայ դիպվածով և ունայնաբար չէ եկեր,*
*այլ մեծամեծ պարտիքներ կատարելու համար ծներ է...*
*Խրիմյան Հայրիկ*

*1950-ականներին հայ բժշկագիտությունը կայուն զարգացման շրջան էր թևակոխել: Ոլորտի առաջատար դեմքերը հին սերնդի ներկայացուցիչներն էին, որոնք արտասահմանյան կրթություն էին ստացել և իրենց մասնագիտական կարողությունները չէին խնայում խորհրդային կարգերի ժամանակ զարգացնելու հայրենի առողջապահական համակարգը, բժշկական համապատասխան օգնություն ցուցաբերելու հետպատերազմյան արհավիրքը հաղթահարած հայրենակիցներին: Ժամանակի հայ բժշկագիտության կարկառուն դեմքերից էր պրոֆեսոր Քրիստափոր Հայրապետի Պետրոսյանը:*

*Խորհրդային ժամանակաշրջանի հանրագիտարաններն ու առանձին մենագրությունները անվանի պրոֆեսորի կենսագրականը ներկայացնելիս հանդես են բերում միտումնավորություն՝ շատ հաճախ ծննդավայրը ներկայացնելով Բաքուն, նշելով միայն կենսագրական թվեր, ոչ ավելին[1]: Սակայն 1999թ. Երևանում լույս է տեսնում է.Պետրոսյանի հեղինակած «Պրոֆեսոր Պետրոսյան» գրքույկը[2], որտեղ հեղինակը՝ որպես ընտանիքի անդամ՝ (պրոֆեսորի հարսն է) ամենայն անկեղծությամբ ներկայացնում է Ք.Պետրոսյանի կյանքն ու գործունեությունը: Հիրավի խիզախումի և նվիրումի պատմություն է սովորական շարքային արցախցու կյանքը, մի կյանք, որն իր մեջ ամփոփում է հայրենի եզերքի տքնանքն ու ողբերգությունը, ապրելու, արարելու տենչն ու լուսավոր ապագայի ձգտումը...*

*Այսպես, Արցախի Վարանդա գավառի Դռնավարզ գյուղում 1887 թվականի հունվար ամսին ծնվում է փոքր երկրի ապագա մեծ բժիշկը՝ Քրիստափոր Պետրոսյանը: Ծննդյան վկայականում գրանցված 1889 թվականը պատահական կեղծում չէ: Խնդիրը նրանում էր, որ դեռ փոքրուց մանուկ Քրիստափորն օգնում էր ծնողներին, մոտակա անտառից փայտ էր հավաքում, տանում Շուշի վաճառում, ստացված գումարով նավթ ու գրքեր գնում: Հաճախ էին նրա կապած փայտի կապոցները բլրի լանջով գլորվում և ընկնում գյուղի հոգևորական Եղիշե Տեր-Մանվելյանի տան բակը: Վերջինս դժգոհում էր, բայց երբ իմանում է, որ տղան այդպես օգնում է ընտանիքին և անպայման ուզում է սովորել, խորհուրդ է տալիս ծնողներին նվազեցնել տարիքը, որպեսզի կրթություն ստանալու հնարավորություն ունենա: Այսպես, ծննդյան վկայականի 1889թ. գրանցումը Քրիստափորին իրավական հիմք տվեց՝դառնալու գյուղի ծխական դպրոցի սան[3]:*

*Հայրապետ Պետրոսյանը ընտանիքի ապրուստը հոգում էր հյուսնությամբ, Հեղինեն զբաղվում էր գորգագործությամբ: Վերջինս Քրիստափորի սիրելի զբաղմունքն էր, հաճույքով էր մոր հետ նստում դազգահի մոտ և գործի դնում փոքրիկ մատները: Գոր-*

---

* Հոդվածն ընդունվել է 18.02.20:
Հոդվածը տպագրության է երաշխավորել ՄՄՀ պատմության ամբիոնը: 29.02.20:

*գագործությունը շատ նուրբ արհեստ է, անհրաժեշտ է ունենալ մատների ճկունություն, ներդաշնակ շարժումներ: Քրիստափորի մատներն արդեն հմտանում էին, իսկ գորգերի վաճառքից ստացված գումարները մեծ ճանապարհն էին հարթում…*

*20-րդ դարասկզբին սակայն ընտանիքը ստիպված էր Բաքու տեղափոխվել: Այստեղ հայրն աշխատանքի է անցնում Ա.Մանթաշևի նավթահանքերում, Քրիստափորը՝ էլեկտրատեխնիկական տեխնիկումում: Քաղաքական անկայուն ժամանակներ էին, և 1905թ. խռովությունների ժամանակ ավագ եղբայրը՝ հնչակ Մակիչը, գազանաբար սպանվում է: Այս միջադեպը չէր կարող չազդել Քրիստափորի վրա. նա ընդգրկվում է անարխիստ-սոցիալիստների շարքերը, Դերբենտում մասնակցում է ժանդարմի դեմ ուղղված դավադրությանը, ինչի հետևանքով դատապարտվում է աքսորի Ռուսաստանի սահմաններից դուրս: Դժվար է կանխորոշել Մանթաշևի հետ Պետրոսյանների փոխհարաբերությունների խորությունը, բայց շրջադարձային այս փուլում, երբ դրված էր աքսորի հարցը, հենց Մանթաշևն է նյութական աջակցություն ցուցաբերում Քրիստափորին, որի շնորհիվ նա կրթություն ստանալու պատրվակով մեկնում է արտասահման՝ նախ Շվեյցարիա, ապա Ֆրանսիա, հավատարիմ մնալով ծնողների հորդորներին՝ այլևս քաղաքականությամբ չզբաղվել, մեկընդմիշտ նվիրվում բժշկի մասնագիտությանը: Այստեղ էլ 1914թ. ավարտում է Բորդոյի բժշկական համալսարանը: Ժամանակակիցները վկայում են, որ ապագա պրոֆեսորը հնարավորություն ուներ մնալու Ֆրանսիայում. դասախոսներից մեկը ցանկություն էր հայտնել որդեգրել նրան, քոլեջներում դասախոսելու առաջարկ ուներ, հնարավորություն ուներ իր մոտ տեղափոխելու ծնողներին: Սակայն նախընտրում է հայրենիք վերադառնալը, որն էլ ճակատագրական է դառնում:*

*1915թ. Քրիստափորը վերադառնում է Բաքու, վերաքննություն հանձնում Խարկով քաղաքում (ցարական կառավարությունը չէր ընդունում արտասահմանյան դիպլոմը) և թույլտվություն ստանում մասնավոր աշխատանքի համար: Հանգիստ աշխատանքն ավարտվում է 1918թ. ջարդերով: Գերեզմանատանը ելուզակներից պատսպարված հայրը սրտի նոպայից մահանում է: Ընտանիքի 9 անդամներից կենդանի են մնում միայն Քրիստափորն ու մայրը՝ Հեղինեն: Խուճապի պահին սակայն մայրը սխալմամբ իրանական էնզելի մեկնող նավն է նստում, Քրիստափորը մնում է Կրասնովոդսկում: Մոտ մեկ տարվա համառ փնտրտուքից հետո նա վերջապես գտնում է մորը և տեղափոխվում նրա մոտ: Էնզելիում ապրում է մեկ տարի, զբաղվում մասնավոր աշխատանքով և արդեն բավականին հարուստ մարդու կարգավիճակով տեղափոխվում Աշխաբադ:*

*Աշխաբադյան ժամանակահատվածից ուշագրավ է Ա.Միկոյանի արձանագրածը, թե ինչպես քաղաքի մարզային բանտում գտնվելու ժամանակ բաքվեցի բժիշկ Պետրոսյանը փրկեց Ստեփան Շահումյանի որդու՝ Լևոնի ոտքը. «…մի քանի անգամ վիրահատեց ոտքը, կանխեց սկսվող գանգրենան և հասավ այն բանին, որ այն ժամանակ վերացավ Լևոնի ոտքը կտրելու անհրաժեշտությունը: Քառասուն տարի անց Երևանում հանդիպեցի բժիշկ Պետրոսյանին, նա արդեն պրոֆեսոր էր, օրթոպեդիկ ինստիտուտի դիրեկտոր»[4]:*

*Շրջադարձային էր Տաշքենդյան ժամանակահատվածը, երբ տեղագրական անատոմիայի և վիրահատական վիրաբուժության ամբիոնում ասիստենտ էր աքսորի մեջ գտնվող, ժամանակի հռչակավոր ռուս վիրաբույժ և հոգևորական Վ.Ֆ. Վոյնո-Յասենեցկու՝ Ղուկաս եպիսկոպոսի /Лука Крымская/ մոտ: Քրիստափորն առանձնակի հպարտությամբ էր հիշում իր ուսուցչին: Նախքան վիրահատություն սկսելը Ղուկաս եպիսկոպոսը սովորություն ուներ վիրահատարանի սրբապատկերի առջև աղոթելու: Անաստվածության քարոզչության պայմաններում առանձնակի համարձակություն էր պարեգոտ կրելը, հոգևոր կոչում ստանալն ու վիրաբուժությամբ զբաղվելը: Այս դեպքի առթիվ Ղուկաս եպիսկոպոսը ինքնակենսագրականում հիշում է. «Իմ հոգևոր կոչում*

*ստանալը մեծ իրադարձություն էր Տաշքենդում: Ինձ մոտ եկան բժշկական ֆակուլտետի ուսանողները ոմն պրոֆեսորի ուղեկցությամբ: Իհարկե նրանք չէին կարող հասկանալ ու գնահատել իմ արարքը, որովհետև շատ հեռու էին հավատքից»[5]: Հաճախ էին Տաշքենդի բժշկական համալսարանի պատի թերթերի ծաղրանկարներում հայտնվում բժիշկ-եպիսկոպոսն ու երիտասարդ ասիստենտ Քրիստափորը: Նա համարձակորեն ոչ միայն մասնագիտական հմտություններ էր յուրացնում ուսուցչից, այլև՝ հոգևոր անմեկնելին:*

*1930թ. ՀԽՍՀ ղեկավարության հրավերով Ք.Պետրոսյանը վերադառնում է Երևան: 1930 թվականից եղել է Երևանի բժշկական ինստիտուտի օրթոպեդիայի և վնասվածքաբանության դասընթացների, 1932-1959թթ.՝ միաժամանակ, տեղագրական անատոմիայի և վիրահատական վիրաբուժության ամբիոնի վարիչ: 1937թ. Հայաստանում առաջին անգամ ոտքի մեծ մատի փոխպատվաստում իրականացրեց ձեռքի վրա, իսկ 1939 թվականին ՀՀ-ում ստեղծեց առաջին օրթոպեդիական բաժանմունքը, բուժական ֆիզկուլտուրայի և մերսման կաբինետ, օրթոպեդական կոշիկի ու պրոթեզների արհեստանոց[6]:*

*Հայրենական մեծ պատերազմի տարիներին՝ 1941-45թթ., Հայաստանում տեղակայված էվակոհոսպիտալների գլխավոր վիրաբույժն էր: Որպես մասնագետ՝ մեծ պատվով ու արժանապատվությամբ կատարեց իր առաքելությունը, գրանցեց բազմաթիվ բարդ վիրահատական, նյարդավիրաբուժական հաջողված միջամտություններ: Օգնող բժիշկների համար փորձ ձեռք բերելու լավագույն դպրոցն էր, որտեղ հիանալ կարելի էր գլխավոր վիրաբույժի արհեստավարժ, ինքնատիպ կառուցվածքով մատների ճկունությամբ նաև: Նրա կատարած գերազանց աշխատանքը խորհրդային ղեկավարությունը հավասարեցրել է ռազմաճակատային ծառայության, պարգևատրել «-Կարմիր դրոշ» շքանշանով:*

*Հետպատերազմյան ժամանակաշրջանում՝ 1946թ., արդեն բժշկական գիտությունների դոկտոր-պրոֆեսոր[7] Ք.Պետրոսյանի անմիջական միջամտությամբ և տնօրինությամբ Երևանում բացվում է Օրթոպեդիայի և Վերականգնողական վիրաբուժության գիտահետազոտական ինստիտուտը: 1953-61թթ., որպես փոխտնօրեն, գլխավորել է ինստիտուտի գիտական և բուժական բաժնի աշխատանքները: 1956թ. նրան շնորհվում է ՀԽՍՀ գիտությունների վաստակավոր գործչի կոչում[8]: Գիտական հետազոտությունները վերաբերում էին հոդի արթրոպլաստիկային, ուսահոդի սովորութային հոդախախտի, ծնկոսկրի կոտրվածքի բուժմանը: Առաջարկել է ոսկրահատման վիրաբուժական սեղան, ծռաթաթության օրթոպեդիկ կոշիկ, վաղ մանկական հասակում ազդրի բնածին հոդախախտի բուժման հարմարանք, դժվարաշարժ հոդերի ֆունկցիայի վերականգնման հարմարանքներ և սարքավորումներ:*

*1961թ. ծանր հիվանդությունից հետո Երևանում իր մահկանացուն է կնքում Երևանի հմայքն ավելացնող անվանի պրոֆեսոր, ժողովրդի ընկալմամբ Բժիշկ Պետրոսյանը: 1962թ. Օրթոպեդիայի և Վնասվածքաբանության ԳՀԻ կրում է Քրիստափոր Պետրոսյանի անունը:*

*Ժամանակակիցների հուշերում ամրագրվել է նրա կայտառ, կատակասեր, օգնող, հյուրընկալ, անվախ կերպարը: Հանրապետության վաստակավոր բժիշկ Տ.Գ.Խուդոյանը հիշում է, թե ինչպիսի գուրգուրանքով էր պրոֆեսորը վերաբերվում իր ուսանողներին, ջանում յուրաքանչյուրի մեջ արթնացնել տաղանդ, օգնում հոգևոր, նյութական, մասնագիտական առումներով: Ուրախանում էր յուրաքանչյուրի ձեռքբերումներով և բոլորին պատգամում էր. «Ուսուցի՛չ, դաստիարակի՛ր աշակերտիդ[9]»: Առանձնահատուկ վերաբերմունք ուներ հայրենակիցների հանդեպ: Ճակատագրի բերումով որտեղ էլ լիներ՝ արտասահմանում, թե միութենական հանրապետություններում, իր շուրջն էր համախմբում ազգակիցներին, ստեղծում «փոքրիկ հայրենիք» և մեծ պատրաստակա-*

մությամբ օգնում բոլորին: Անգամ ստալինյան բռնություններից չերկնչեց. բռնադատված հայրենակիցներին օգնեց աշխատանքի տեղավորելու հարցում, իր տանը հյուրընկալեց լենինգրադցի շնորհազարկված գիտնական-բժիշկ Մաշանսկուն, համալսարանական ուսանողների հետ հոտնկայս հարգեց մեծ բարերար Ա.Մանթաշևի կորուստը (մինչդեռ նրա անունը տալն անգամ վտանգավոր էր)[10]: Սարսափի այդ տարիներին անձնվիրության, անշահախնդիր սիրո ու ժողովրդական հարգանքի շնորհիվ միայն պրոֆեսորն ազատության մեջ մնաց:

Բուռն ու ակտիվ էր Ք.Պետրոսյանի աշխատանքային, հասարակական կյանքը: Ուրիշի ցավին ականջալուր, իր խնդիրների մասին սակայն չէր սիրում խոսել: Անձնական կյանքում լիակատար երջանկության չհասավ: Որդու մոր՝ դեղաբուժական տեխնիկումի ուսանողուհի Կլավդիա Միխայլովնայի հետ ծանոթացել էր Տաշքենդում: Կլավդիան Տաշքենդ աքսորված արիստոկրատ ընտանիքից էր սերում, լավ դաստիարակություն էր ստացել, արտաքինից գեղեցիկ, ուրախ բնավորություն ուներ: Ք.Պետրոսյանը Կլավդիայի հղիության մասին իմացավ Երևանում և անմիջապես իր մոտ հրավիրեց: 1931թ. Ստեփանակերտում ծնվում է որդին՝ Ռաֆայելը: 45-ամյա Քրիստափորի և 23-ամյա Կլավդիայի միությանը հավանություն չէր տալիս Հեղինեն: Ռուս արիստոկրատ ծագմամբ կինն էլ չհարմարվեց հայկական ավանդապահ ընտանիքի կանոններին ու հեռացավ:

Ք.Պետրոսյանն իր վրա վերցրեց միակ որդու դաստիարակության խնդիրը, այլևս չամուսնացավ: Նրա անձնական երջանկության կիզակետը դարձավ որդու ընտանիքը, երեք թոռները, որոնք հետագայում բոլորն էլ նշանավոր բժիշկներ դարձան[11]: Որդին՝ բժշկագիտության թեկնածու, մանկական օրթոպեդ, վնասվածքաբան Ռաֆայել Պետրոսյանը, վաղաժամ հեռացավ կյանքից: Անվանակից թոռը 17 տարի շարունակ Կիրովականի մանկական օրթոպեդիայի և վնասվածքաբանության ծառայության ղեկավարն էր, անգնահատելի էր նրա գործունեությունը Սպիտակի երկրաշարժից տուժածներին օգնելու հարցում: Ծոռը՝ Ռաֆայել Պետրոսյան կրտսերը, բժշկագիտության թեկնածու է, այսօր էլ իր ներդրումն է ունենում հայրենական առողջապահական ոլորտի զարգացման գործում[12]: Հետագայում հոր և պապիկի հիշատակը վառ պահելու համար Պետրոսյանների ընտանիքը անվանական կրթաթոշակ էր սահմանել վիրաբուժության բնագավառում աչքի ընկած լավագույն ուսանողի համար:

Անվանի բժիշկ-գիտնականի ներդրումը բարձր է գնահատվում նաև ժամանակակիցների կողմից: Այսպես, 2018թ. նոյեմբերին՝ ծննդյան 120-ամյակին ընդառաջ, ԵՊԲՀ տեղագրական անատոմիայի և օպերատիվ վիրաբուժության ամբիոնում տեղի ունեցավ Քրիստափոր Պետրոսյանի կիսանդրու բացումը[13], իսկ 2019թ-ին Հերացու անվան բժշկական համալսարանում սահմանվեց Քրիստափոր Պետրոսյանի անվան կրթաթոշակ՝ «Վնասվածքաբանություն և օրթոպեդիա» մասնագիտացման գծով[14]:

Խորհրդային տարիներին Արցախում և հայրենի գյուղում բոլորն էին հիշում Պետրոսյաններին, գյուղական գրադարանում «Գյուղի նշանավոր մարդիկ» խորագրով ալբոմի առաջին էջում պրոֆեսորի նկարն էր զետեղված՝ կենսագրական նյութով: Մեր օրերում, սակայն, հրետակոծությունից կիսավեր են և՛ գյուղական գրադարանը, և՛ պրոֆեսորի հայրական տունը, իսկ երիտասարդ սերունդը պեղելով է հայտնաբերում իր մեծերին…

## ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1. Ով ով է. Հայեր. Կենսագրական հանրագիտարան, հտ. 2, Երևան, 2007, էջ 334: Կարապետյան Ս.Ա., Լեռնային Ղարաբաղի Մ.Գորկու անվան մարզային գրա-

դարանում, Ստեփանակերտ, 1962, էջ 47: Айриян А.П., Армянские ученые-медики, Ереван, 1998, стр. 184:
2. Петросян Э.Е., Профессор Петросян, Ереван, 1999.
3. Նույն տեղում, էջ 5: Վերոնշյալ այս դեպքերից մեկ դար անց միայն՝ 1991թ., բախտ կվիճակվի հանդիպելու նշանավոր ընտանիքների երկու սերունդներին՝ հոգևորականի և արդեն իսկ նշանավոր պրոֆեսորի թոռներին, ավելի ուշ բախտ է վիճակվել տողերիս հեղինակին նույնպես հյուրընկալվելու պրոֆեսորի թոռան օջախում:
4. Միկոյան Ա., Պայքարի ուղիով, գիրք 1, Երևան, 1972, էջ 364:
5. Лука /Войно-Ясенецкий В.Ф./, Я полюбил страдание…, автобиография, Краматорск, 2009, 206 с.
6. https://armenpress.am
7. 1936թ. Ք.Պետրոսյանին շնորհվեց պրոֆեսորի, 1943թ.՝ բժշկական գիտության դոկտորի կոչում:
8. Ով ով է. Հայեր. Կենսագրական հանրագիտարան, հտ. 2, Երևան, 2007, էջ 334:
9. Петросян Э.Е., Профессор Петросян, Ереван, 1999, стр. 19.
10. Նույն տեղում՝ էջ 22:
11. Նույն տեղում՝ 27-28:
12. https://golosarmenii.am. Жизнь, которая удалась.
13. https://armenpress.am
14. https://med.news.am

## ԱՄՓՈՓԱԳԻՐ

### Հայ բժշկագիտության երախտավորը. Քրիստափոր Հայրապետի Պետրոսյան

Լենա Սուլեյմանյան

1950-ականների հայ բժշկագիտության կարկառուն դեմքերից էր պրոֆեսոր Քրիստափոր Հայրապետի Պետրոսյանը: Սովորական արցախցի պատանուն հաջողվում է ժամանակաշրջանի բոլոր արհավիրքները հաղթահարել, փայլուն կրթություն ստանալ Բորդոյի բժշկական համալսարանում, արժանանալ բժշկական գիտությունների դոկտոր-պրոֆեսորի, ՀԽՍՀ գիտությունների վաստակավոր գործչի կոչումների: Ք.Պետրոսյանը Հայաստանում օրթոպեդիայի, վնասվածքաբանության և պրոթեզավորման հիմնադիրն էր: Նրա գործն այսօր շարունակում են թոռն ու ծոռները:

## РЕЗЮМЕ

### Христофор Айрапетович Петросян – покровитель армянской медицины

Лена Сулейманян

***Ключевые слова:*** медицина, ортопедия, травматология, оперативная хирургия, эвакогоспиталь, заслуженный деятель.

Одной из выдающихся фигур армянской медицины 1950-х годов был профессор Христофор Петросян. Обыкновенному арцахскому юноше удалось преодолеть все трудности эпохи, получить блестящее образование в медицинском университете Бордо и удостоится звания доктора-профессора медицинских наук, заслуженного деятеля наук Армянской ССР. Петросян был основателем ортопедии, травматологии и протезирования в Армении. Его дело сегодня продолжают его внук и правнуки.

**SUMMARY**

**Christopher Petrosyan – the Patron of Armenian Medicine**

**Lena Suleymanyan**

***Keywords:*** medicine, orthopedics, traumatology, operative surgery, evacuation hospital, honored worker.

Professor Christopher Petrosyan was one of the most prominent figures of Armenian medicine in the 1950s. An ordinary youth from Artsakh managed to pass through all the ordeals of the era and get a brilliant education at Bordeaux Medical University. He was awarded the title of Professor, Doctor of Medical Sciences and honored worker of Sciences of the Armenian SSR. Christopher Petrosyan was the founder of orthopedics, traumatology and prosthetics in Armenia. His grandson and great-grandchildren continue his work today.